ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականությանը պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրելու բաց մրցույթ: Մրցույթը տեղի կունենա 2025 թվականի մարտի 7-ին՝ ժամը 11:30, Տաշիրի համայնքապետարանում՝ Վ. Սարգսյան 94 հասցեում: Մրցույթի են դրվում հետևյալ լոտերը՝

Լոտ 1. Տաշիր համայնք գ. Բլագոդարնոյե, 06-024-0101-0096 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության խոտհարքը 4,35805 հա , գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով 10 տարի ժամկետով, 46000 դրամ մեկնարկային գնով:
Լոտ 2. Տաշիր համայնք գ. Բլագոդարնոյե, 06-024-0101-0098 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության խոտհարքը 10,81834 հա , գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով 10 տարի ժամկետով, 113000 դրամ մեկնարկային գնով:

Լոտ 3. Տաշիր համայնք գ. Սարատովկա, 06-099-0229-0134 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության արոտավայր 9,05794 հա , գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով 10 տարի ժամկետով, 95000 դրամ մեկնարկային գնով:
Հողամասերի նկատմամբ սահմանափակումներ չկան, նրաց օգտագործումը սերվիտուտ չի առաջացնում: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.
ա/ հայտ,
բ/ մրցույթի մասնակցության համար սահմանված 2000 ՀՀ դրամի չափով վճարի անդորրագիր,
գ/ անձնագիր, իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթերը:
Մրցույթին մասնակցելու հայտերի ընդունումը դադարեցվում է 2025 թվականի մարտի 4-ին՝ ժամը 18:00-ին: Մրցույթի անցկացման օրը վճարվում է նախավճար հողամասի մեկնարկային գնի 5 % չափով: Նախավճարը մուծվում է մրցույթի անցկացման օրը:
Մրցույթում հաղթող է ճանաչվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկած մասնակիցը: Մրցույթում առաջարկված հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է Տաշիր համայնքի բնակչին կամ Տաշիր համայնքում գրանցված իրավաբանական անձին: Մրցույթի կանոնակարգին մասնակիցները կարող են ծանոթանալ ամեն օր՝ ժամը 9:00–18:00 ընկած ժամանակահատվածում Տաշիրի համայնքապետարանի գյուղատնտեսության, հողօգտագործման և բնապահպանության բաժնում:
Մրցույթը չկայանալու դեպքում գյուղատնտեսական նպատակային նշանաության հողամասերի կրկնամրցույթը անց է կացվելու 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ մարտի 17-ին:
Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Տաշիրի համայնքապետարան (0254) 2-21-68, 2-34-06 հեռախոսահամարներով:
Տաշիրի համայնքապետարան